# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 45 -Ա

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով ավագանին որոշեց.

45-Ա

Հաստատել համայնքի ավագանու թիվ 09 արտահերթ նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ:

1. ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ս.Գրիգորյան/

2. ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ զեկ. Գ. Միրզոյան/

3. ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ս.Գրիգորյան/

4. ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Գրիգորյան/

5. ԱՎՇԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ և ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ս.Գրիգորյան/

6. /զեկ. Ս.Գրիգորյան/

7. ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Գ.Միրզոյան

8. ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.09.2019ԹՎԱԿԱՆԻ N 36-Ա «ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ , ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՅԼ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ» ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/զեկ. Գ.Միրզոյան/

9. «ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱՄԱԿԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

/զեկ. Հ.Ղուկասյան/

Կողմ -6 Դեմ – 0 Ձեռնպահ-0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ

3. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ

4. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ

5. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ

6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 46 -Ա

## ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետի և 83-րդ հոդվածի դրույթներով՝ ավագանին կայացրեց որոշում.**

Մեփական եկամուտների պլանը կատարվել է .

| | | |
|---|---|---|
| հողի հարկ | 89.4% | (18774.0) հ.դրամ |
| գույքահարկ | 138.8 % | (22207.0)հ.դրամ |
| տեղական տուրքեր | 105.1 % | (1616.8)հ.դրամ |
| վարձավճարնե | 112.5 % | (60509.7).դրամ |
| տեղական վճարներ/ջուր/ | 103.7 % | (14001.5) հ. դրամ |
| տեղական վճարներ/աղբ./ | 116.5 % | (1165.0) դրամ |
| ընամենը եկամուտներ՝ | 110.7% | (118274.0)հ.դրամ |

1. Ընդունել իգիտություն համայնքի ղեկավարի զեկույցը 2019 թվականի տարեվերջյան բյուջեի կատարման մասին:

2.Բացատրական աշխատանքներ տանել հարկատուների շրջանում հողի հարկի գանձումները ժամանակին կատարելու համար, որը բխում է համայնքի և համայնքի բնակիչների շահերից:

Կողմ -6 Դեմ – 0 Ձեռնպահ-0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 47 -Ա

## ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 32-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշեց.

47-Ա

Հաստատել Ավշար համայնքի 2019թվականի տարեվերջյան գույքագրման արդյունքները՝ համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ – 0 Ձեռնպահ-0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 48 -Ա

## ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավավելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի , 18-րդ հոդվածի 1-ին կետի 18 և 19-րդ ենթակետերի , ինչպես նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով կայացրեց որոշում.

48-Ն

1. Ավշար համայնքի տեղական տուրքեր և վճարների դրույքաչափերը հաշվարկելիս <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 10-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0,5 գործակիցը, 4-րդ, 6-րդ, 8-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0,75 գործակիցը, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0,3 գործակիցը:

2.Հաստատել տեղական տուրքերի դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար տեղական տուրքը սահմանվում է՝ 7500 դրամ,

բ. սույն կետի ,աե ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար տեղական տուրքը սահմանվում է՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար տեղական տուրքը սահմանվում է՝ 15000 դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար տեղական տուրքը սահմանվում է՝ 25000 դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար տեղական տուրքը սահմանվում է՝ 25000 դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար տեղական տուրքը սահմանվում է՝ 50000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար տեղական տուրքը սահմանվում է՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար տեղական տուրքը սահմանվում է՝ 1500 դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար տեղական տուրքը սահմանվում է՝ 2500 դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի ,աե ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 150000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 45000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 37500 դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10500դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13500դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20500դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25500 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45500 դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10500դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13500 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20500 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25500 դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45500 դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում ,Առևտրի և ծառայությունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 175 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 30000 դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 45000 դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ,

դ. խաղատների համար՝ 500000 դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ 250000 դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ 100000 դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5500 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10500 դրամ,

- 100-իցմինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15500 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20500 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30500 դրամ.

բ. Ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 1000 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8500 դրամ,

- 500 կամ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15500 դրամ.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 600 դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1050 դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 450 դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3000 դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 150000 դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 750000 դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1500000 դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2100000 դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3000000 դրամ:

3. Հաստատել տեղական վճարների դրույքաչափերը:

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը,

արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 500 դրամ.

6) Համայնքի տարածքում աղբահանության վճար սահմանել՝

6,1)կենցաղային աղբի համար՝ փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 150 դրամ,

6,2) առևտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով՝ 1 քմ համար 20 դրամ:

6,3) հյուրանոցների, հյուրանոցային ծառայությունների իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ, 10 դրամ,

6,4) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով 1ք.մ համար 4 դրամ.

6,5) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով 1ք,մ-ի համար 2 դրամ:

6,6) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար սահմանվում է --- 500 դրամ

6,7) շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և տեղափոխման համար տրամադրվող թույլտվության վճար սահմանվում է՝ --- 100 դրամ

7) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար սահմանել ծնողական վճար՝ յուրաքանչյուր երեխայի համար 4000 դրամ:

8) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 500 դրամ:

Կողմ -6 Դեմ – 0 Ձեռնպահ-0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ

2.ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ

3.ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ

4.ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ

5.ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ

6.ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 49 –Ա

## ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ կետի, 28-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է.
49-Ա

1. Համայնքի ղեկավարի 2020թվականի պաշտոնային դրույքաչափը հաստատել 440000 /չորս հարյուր քառասուն հազար / ՀՀ դրամ:

Կողմ -6 Դեմ – 0 Ձեռնպահ-0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 50 –Ա

# ԱՎՇԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ և ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՅԻՆ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի , 34-րդ հոդվածի, 3-րդ կետի պահանջներով ՝ համայնքի ավագանին որոշում է.**
**50-Ա**

Հաստատել 2020թվականի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքների թվաքանակը 21, մշակութային և ընդհանուր սպասարկման բյուջետային հիմնարկի հաստիքների թվաքանակը 31 և պաշտոնային դրույքաչափերը:

*1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ*

| *Հ/Հ* | *ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ* | *ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ* | *ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)* |
|---|---|---|---|
| *ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ* | | | |
| *1* | *Համայնքի ղեկավարի տեղակալ* | *1* | *228500* |
| *2* | *Համայնքի ղեկավարի օգնական* | *1* | *175000* |
| *3* | *Համայնքի ղեկավարի խորհրդական* | *1* | *175000* |
| *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ* | | | |
| *4* | *Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար* | *1* | *262000* |
| *5* | *Համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ* | *1* | *235500* |
| *6* | *Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ* | *2* | *211500* |

| | | | |
|---|---|---|---|
| 7 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 181800 |
| 8 | Համայնքի սոցիալական աշխատող | 1 | 181800 |
| 9 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ | 2 | 163500 |
| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | |
| 10 | Գործավար | 1 | 138000 |
| 11 | Հասարակական կարգի պահապան | 3 | 138000 |
| 12 | Վարորդ | 1 | 151000 |
| 13 | Համայնքի տնտեսական զարգացման հարցերի պատասխանատու | 1 | 138000 |
| 14 | Մաքրուհի | 1 | 109000 |
| 15 | Պահակ | 1 | 103000 |
| 16 | Պահակ | 1 | 108000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար) |
|---|---|---|---|
| ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ | | | |
| 1 | Տնօրեն | 1 | 212000 |
| 2 | Տեղակալ | 1 | 155000 |
| 3 | Հաշվապահ | 1 | 181000 |
| 4 | Համակարգչային օպերատոր | 1 | 123000 |
| 5 | Մշակույթի տան վարիչ | 1 | 144000 |
| 6 | Գրադարանի վարիչ | 1 | 109000 |
| 7 | Գրադարանավար | 1 | 108000 |
| 8 | Գեղմասվար | 1 | 108000 |
| 9 | Շախմատի մարզիչ | 1 | 95000 |
| 10 | Նկարչության ուսուցիչ | 1 | 95000 |
| 11 | Խմելու ջրի վարձի հավաքագրող | 2 | 162000 |
| 12 | Խմելու ջրի սպասարկող | 1 | 128000 |

| | | | |
|---|---|---|---|
| 14 | Կատարածու | 1 | 123000 |
| 15 | Տեխնիկ փականագործ | 1 | 149000 |
| 16 | Ըմբշամարտի մարզիչ | 1 | 113000 |
| 17 | Էլեկտրիկ | 1 | 104000 |
| 18 | Գերեզմանոցի պահակ | 1 | 100000 |
| 19 | Այգեպան | 1 | 100000 |
| 20 | Գրադարանի մաքրուհի | 1 | 108000 |
| 21 | Հասարակական զուգարանի մաքրուհի | 1 | 105000 |
| 22 | Մշակութային և ընդհանուր սպասարկման բյուջետային հիմնարկի զբաղեցրած տարածքի մաքրուհի | 1 | 103000 |
| 23 | Հրապարակի մաքրուհի | 1 | 105000 |
| 24 | Տեխսպասարկող բանվոր | 1 | 103000 |
| 25 | Ֆուտբոլի դաշտի պահակ | 1 | 100000 |
| 26 | Պարուսույց | 1 | 93000 |
| 27 | Կենցաղի ջրի վարձ հավաքագրող | 1 | 103000 |
| 28 | Գոբելենի և մաքրեմեի ուսուցիչ | 1 | 93000 |
| 29 | Կաթսայավար | 1 | 113000 |
| 30 | Մշակույթի տան մաքրուհի | 2 | 103000 |
| 31 | Պահակ | 2 | 90000 |

Կողմ -6 Դեմ – 0 Ձեռնպահ-0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 51 –Ա

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետի պահանջներով և առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 219 –րդ հոդվածի դրույթներով՝ ավագանին կայացրեց որոշում:**

51-Ա

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ հաշվի առնելով համայնքի ֆինանսական հնարավորությունները, տարվա յուրաքանչյուր եռամսյակի ավարտին՝ համայնքի ղեկավարին, համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներին, հայեցողական պաշտոն զբաղեցնողներին, տեխնիկական սպասարկումն իրականացնող անձնակազմին, ինչպես նաև մշակութային ընդհանուր սպասարկման բյուջետային հիմնարկի աշխատակիցներին, տալ միանվագ դրամական պարգևատրում յուրաքանչյուրին մինչև իր մեկ ամսվա աշխատավարձի չափով, ըստ կատարած աշխատանքի ծանրաբեռնվածության:

Կողմ -6 Դեմ – 0 Ձեռնպահ-0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ
6. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 52 –Ա

# ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-ին կետի , 83-րդ հոդվածի պահանջներով հիմք ընդունելով համայնքի ղեկավարի ներկայացրած բյուջեի նախագիծը, ավագանին որոշում է.

52-Ա

Հաստատել համայնքի 2020թ. տարեկան բյուջեն

ՀԱՏՎԱԾ 1

| | |
|---|---|
| 1. Եկամուտների գծով | 150691.8 հ.դրամ |
| 2. Ծախսերի գծով | 150691.8 հ. դրամ |

ՀԱՏՎԱԾ 2

Բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների հետևյալ չափով.

| | |
|---|---|
| 1.Հարկեր և տուրքեր. | 40760.0 հ. դրամ |
| այդ թվում՝ | |
| *1.1.* Գույքային հարկեր անշարժ գույքից. | *23458.5* հ. դրամ |
| այդ թվում՝ | |
| 1.1.1. Գույքահարկ շենքի և շինությունների | 2255.0 հ. դրամ |
| որից՝ | |
| ա. Ֆիզիկական անձանցից | 1173.0 հ.դրամ |
| բ. Իրավաբանական անձանցից | 1082.0 հ. դրամ |
| 1.1.2. հողի հարկ | *21203.5* հ. դրամ |
| այդ թվում՝ | |
| ա. ֆիզիկական անձանցից | 20920.5 հ.դրամ |
| բ. իրավաբանական անձանցից | 283.0 հ.դրամ |
| 1.2. գույքահարկ փոխադրամիջոցներից | *15744.0* հ.դրամ |
| ա. Ֆիզիկական անձանցից | 12993.0 հ.դրամ |
| բ. Իրավաբանական անձանցից | 2751.0 հ. դրամ |
| 1.3. Ապրանքների օգտագործման և իրացման թույլտվության համար | *1557.5* հ.դրամ |
| այդ թվում՝ | |
| 1.3.1. տեղական տուրքեր | 1557.5 հ. դրամ |
| որից՝ | |
| ա. շինությունների շինարարության թույլտվության համար | 90,0 հ. դրամ |
| բ. շինությունների քանդման թույլտվության համար | 5,0 հ. դրամ |
| գ. ծխախոտի վաճառքի թույլտվության համար | 250.0 հ. դրամ |
| դ. խմիչքի վաճառքի թույլտվության համար | 250.0 հ. դրամ |
| ե. հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար | 750.0 հ. դրամ |
| զ. ժամը 24-00-ից հետո աշխատելու թույլտվության համար | 112.5 հ. դրամ |
| է. արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար | 100,0 հ. դրամ |
| 2. Պաշտոնական դրամաշնորհներ | 77127.8 հ. դրամ |
| այդ թվում՝ | |
| 2.1. ընթացիկ ներքին դրամաշնորհներ / դոտացիա/ | 77127.8 հ.դրամ |
| 3. Այլ եկամուտներ | 32804.0 հ. դրամ |

այդ թվում՝

| | |
|---|---|
| 3.1. գույքի վարձակալությունից մուտքեր | *18304.0* հ. դրամ |
| որից՝ | |
| ա. հողերի վարձակալություն | 16000.0 հ. դրամ |
| բ. այլ գույքի վարձակալություն | 2304.0 հ. դրամ |
| 3.2. Վարչական գանձումներ | *14500.0* հ. դրամ |
| այդ թվում | |
| ա. տեղական վճարներ | 13500,0 հ. դրամ |
| բ. աղբահանության վճար | 1000.0 հ. դրամ |

ՀԱՏՎԱԾ 3

Բյուջեից հատկացումներ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման հետևյալ չափով.

| | |
|---|---|
| 3.1. օրենսդիր և գործ. մարմիններ 01,1,1 | 63567.0 հ. դրամ |
| 3.2. ընդ բնույթի հանրային ծառայություններ01,6,1 | 400.0 հ. դրամ |
| 3.3 ընդհանուր բնույթի հարաբերություններ 04.1.1 | 1850.0 հ.դրամ |
| 3.4. ճանապարհային տրանսպորտ 04,5,1 | 3000,0 հ. դրամ |
| 3.5 աղբահանություն 05.1.1 | 5040.0 հ.դրամ |
| 3.6. փողոցների լուսավորում 06,4,1 | 3900,0 հ. դրամ |
| 3.7. մշակ. և ընդ. սպասարկման բյուջոտային հիմնարկ 06, 6,1 | 43300.0 հ. դրամ |
| 3.8. հանգիստ, մշակույթ և կրոն 08,6,1 | 2900,0 հ. դրամ |
| 3.9. բարձրագույն կրթություն 09.4.1 | 3500.0.հ. դրամ |
| 3.10. սոց. հատուկ արտոնություններ 10,7,1 | 4800,0 հ. դրամ |
| 3.11. պահուստային ֆոնդ / վարչական բյուջեի/ 11,1,2 | 21470.8 հ. դրամ |

ՀԱՏՎԱԾ 4

3-րդ հատվածով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծառայությունները ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների.

| | |
|---|---|
| **4.1. Օրենսդիր և գործ. մարմիններ ընդամենը՝** | **63567.0 հ. դրամ** |
| **որից՝** | |
| ա. աշխատավարձ 4111 | 38500.0.0 հ. դրամ |
| բ. էներգետիկ ծառայություն 4212 | 2000.0 հ. դրամ |
| գ. կոմունալ ծառայություններ 4213 | 15000.0 հ.դրամ |
| դ. կապի ծառայություն 4214 | 800.0 հ. դրամ |
| ե. ապահովագրական ծախսեր 4215 | 100,0 հ. դրամ |
| զ. ներքին գործուղումներ 4221 | 300,0 հ. դրամ |
| է. համակարգչային ծառայություն 4232 | 267,0 հ. դրամ |
| ը. տեղեկատվական ծառայություն 4234 | 300,0 հ.դրամ |
| թ. կառավարչական ծառայություններ 4235 | 2400.0 հ.դրամ |
| ժ. այլ ծառայություններ 4239 | 250,0 հ.դրամ |
| ի. մասնագիտական ծառայություններ 4241 | 150.0 հ. դրամ |
| լ. մեքեն. և սարքավոր. ընթացիկ նորոգում և պահպանում 4252 | 100,0 հ. դրամ |
| խ. գրասենյակային նյութեր 4261 | 100,0 հ. դրամ |
| ծ. տրանսպորտային նյութեր 4264 | 3000,0 հ. դրամ |
| կ. կենցաղ. հանրային սննդի նյութեր 4267 | 100.0 հ.դրամ |
| հ. այլ նյութեր 4269 | 100,0 հ. դրամ |
| ձ. պարտադիր վճարներ 4823 | 100,0 հ. դրամ |
| **4.2. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ** | **400,0 հ. դրամ** |
| ա. պարտադիր վճարներ 4823 | 400,0 հ. դրամ |
| **4.3 Ընդհանուր բնույթի հարաբերություններ** | **1850.0 հ.դրամ** |
| ա. այլ նյութերի ձեռքբերում 4269 | 350.0 հ. դրամ |
| բ. ընթացիկ դրամաշնորհ ՀՈԱԿ-ներին 4639 | 300,0 հ. դրամ |
| գ. այլ ծառայություններ 4239 | 300,0 հ. դրամ |
| ա. ընդ. նորոգում և պահպանում 4251 | 900.0 հ. դրամ |
| **4.4. ճանապարհային տրանսպորտ** | **3000.0 հ. դրամ** |
| ա. ընդ. նորոգում և պահպանում 4251 | 3000.0հ. դրամ |
| **4.5 աղբահանություն** | **5040.0 հ. դրամ** |
| ա. աղբահանության պարտադիր վճար 4213 | 5040.0 հ. դրամ |
| **4.6. Փողոցների լուսավորում** | **3900,0 հ. դրամ** |
| ա. էներգետիկ ծառայություններ 4212 | 3000,0 հ. դրամ |
| բ. ընթացիկ նորոգում և պահպանում 4251 | 900,0 հ. դրամ |

| | |
|---|---|
| **4.7. Մշակութային և ընդհանուր սպասարկման բյուջետային հիմնարկ** | **43300.0 հ. դրամ** |
| ա. աշխատավարձ 4111 | 37000,0 հ. դրամ |
| բ. էներգետիկ ծառայություններ 4212 | 2500,0 հ. դրամ |
| գ. այլ ծառայություններ 4239 | 350,0 հ. դրամ |
| դ. մասնագիտական ծառայություն 4241 | 400.0 հ. դրամ |
| ե. ընթացիկ նորոգում և պահպանում 4251 | 950,0 հ. դրամ |
| զ. գրասենյակային նյութեր 4261 | 400,0 հ. դրամ |
| է. տրանսպորտային նյութեր 4264 | 300,0 հ. դրամ |
| ը. այլ նյութեր 4269 | 400,0 հ. դրամ |
| **4.8. Հանգիստ, մշակույթ և կրոն** | **2900,0 հ. դրամ** |
| ա. այլ ծառայություններ 4239 | 2000.0 հ. դրամ |
| բ. այլ նյութեր 4269 | 900,0 հ. դրամ |
| **4.9 Բարձրագույն կրթություն 09.4.1** | **3500.0 հ. դրամ** |
| ա. այլ ծառայություններ 4239 | 3500.0 հ. դրամ |
| **4.10 Սոց. հատուկ արտոնություններ** | **4800,0 հ.դրամ** |
| ա. հուղարկավորության նպաստներ 4726 | 500,0 հ. դրամ |
| բ. այլ նպաստներ 4729 | 4000,0 հ. դրամ |
| գ. նվիրատվություն հիմնադրամներին 4819 | 300,0 հ. դրամ |
| **4.11 Պահուստային ֆոնդ 4891** | **18434.8 հ. դրամ** |

ՀԱՏՎԱԾ 5

Սահմանել, որ 2020թ. բյուջեի կատարման ընթացքում պաշտպանվածության են ենթական աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները:

ՀԱՏՎԱԾ 6

Սահմանել, որ 2020թ. բյուջեից ծախսերի ֆինանսավորումը կատարվում է բյուջեի փաստացի մուտքերի սահմաններում, պահպանելով սույն որոշմամբ նախատեսված ծախսերի համամասնությունները:

Կողմ -6 Դեմ – 0 Ձեռնպահ-0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 53 –Ա

# ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.09.2019ԹՎԱԿԱՆԻ N 36-Ա «ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ , ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՅԼ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ» ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Հիմք ընդունելով Ավշարի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Գ.Միրզոյանի զեկույցը, այն մասին որ, որպես մանկապարտեզի շենք, նախադպրոցական գործունեություն ծավալելու համար համայնքի տարածքում համապատասխան շենք–շինություններ չկան , եղածներն էլ չեն համապատասխանում՝ ավագանին կայացրեց որոշում.**

**53-Ա**

1.Ընդունել ի գիտություն համայնքապետարանի գլխավոր մասնագետ Գ. Միրզոյանի զեկույցը այն մասին, որ համայնքի տարածքում, որպես մանկապարտեզի շենք, նախադպրոցական գործունեություն ծավալելու համար համապատասխան շենք –շինություններ չկան, եղածներն էլ չեն համապատասխանում:

2.Պատվիրել նոր նախագիծ - նախահաշիվ մանկապարտեզի տարածք կոչվող տարածքում նախադպրոցական մեկ հարկանի շենք կառուցելու նպատակով , 150 և հնարավորինս ավել երեխաների համար:

Կողմ -6 Դեմ – 0 Ձեռնպահ-0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 54 –Ա

## «ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱՄԱԿԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

**Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի, 33-րդ հոդվածի 1-ին կետի, 1-ին և 4-րդ ենթակետերի , 34-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով՝ որոշեց.**

**54-Ա**

1.Համայնքի ավագանու 13.07.2018թվականի թիվ 23-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
ա) որոշման 2-րդ կետում նշված «3% (երեք տոկոս) բառերը և թիվը , որը համայնքի ավագանու 20.05.2019թվականի թիվ 21-Ա որոշմամաբ փոփոխվել էր «2% (երկու տոկոս)» բառերով և թվով՝ փոխարինել 0.5% (զերո ամբողջ հինգ տոկոս) » բառերով և թվով:
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ – 0 Ձեռնպահ-0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ